15372

№ 4 ԳՐԱԴԱՐԱՆ „ՊԱՅՔԱՐ“-Ի № 4

Ո՞ՐՆ Է ԻՍԿԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆԸ

Կազմեց Յ. Ս.

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐ.

1907

ԳԻՆՆ Է 2 ԿՈՊ.

321
Ո-61

6 JUL 2013

2 6 SEP 20

№ 4 ԳՐԱԴԱՐԱՆ „ՊԱՅՔԱՐ"-Ի № 4

321
Ո-61
ա՛ր
195
38944

Ո՞ՐՆ Է ԻՍԿԱԿԱՆ

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆԸ

Կազմեց Յ. Ս.

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԹԻՖԼԻԶ

ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՂԱՆԵԱՆԻ, ՊՕԼԻՑԵՅՍԿԱՅԱ, 7.

Электропеч. Н. Аганянцъ, Полицейская, 7.

1907

(19)

13372

Ո՞ՐՆ Է ԻՍԿԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆԸ

Շուտով պէտք է տեղի ունենայ երկրորդ Պետական Դումայի բացումը։ Կառավարութիւնն «ուզում է կատարել» իր խոստումները, որ տուել է Բարձրագոյն մանիֆեստով։

Ուրեմն նոր ընտրութիւններ, նորից ժողովրդական ներկայացուցչական կառավարութիւն։

Բայց կա՞ն արդեօք կառավարութեան այդպիսի ձևեր, և ո՞ր չափով մենք պէտք է մասնակցութիւն ունենանք ընդհանրապէս պետական գործերում, որ երկիրը համարւի զուտ ժողովրդական—դեմօկրատական, ահա թէ ինչի՞ հետ աւելորդ չէր լինի ծանօթանալ մեզ՝ իբրև իսկական քաղաքացիների։

Ինչպէս յայտնի է, ամեն մի պետութիւն կարիք ունի կառավարութեան։ Իսկ կառավարութեան գլխաւոր դերը կայանում է նրանում, որ հրատարակէ օրէնքներ, կարևոր դէպքում փոփոխէ նրանց, հսկէ օրէնքների անշեղ կատարման վրայ և, վերջապէս, ունենայ հոգացողութիւն երկրի ապահովութեան մասին։

Այդպիսով կառավարութեան զանազան եղանակներ են առաջ եկել հին ժամանակներից։ Այդ ձևերը մեծ նշանակութիւն և կապ են ունեցել ազգաբնակութեան տնտե-

սական, կուլտուրական զարգացման հետ։ Մարդու արդիւնաբերական և աշխատող գործունէութիւնը միշտ առիթ է տուել շեղելու կառավարչական ձևերից և դիմելու այս կամ այն եղանակին։

Շատ անգամ յաջողուել է մէկին կամ մի-սին մանաւանդ ոյժի միջոցով դառնալ երկրի տէրը և իրան հրատարակել միապետ։ Դրանից յետոյ այդպիսին անտես է արել ժողովրդի իրաւունքը և իր սրտի ուզածն է խաղացել երկրի գլխին։ Եւ որպէսզի իր արածները քօղարկուի, նա սովորաբար ասել է՝ թէ ինքը նշանակուած է Աստուածանից և Նրանից էլ ընտրուած. օրինակ՝ Լիւդովիկոս XIV-ը ասում էր՝ «Պետութիւնը ես եմ»։

Մենք կանգ չենք առնիլ միապետ բռնակալների խաղերի վրայ, այդ մեր նպատակից դուրս է. կասենք միայն, որ հին ժամանակներից ազգաբնակութիւնն ինքն է կառավարել իր գործերը, բայց ժամանակի ընթացքում գնալով առաջ է եկել կառավարութեան մի ուրիշ ձև. երկիրը կառավարել է ոչ թէ ինքը ազգաբնակութիւնն ամբողջապէս, այլ այդ գործը նա յանձնել է իր միջից ընտրուած մարդկանց։ Այդ ձևն է, որ կոչւում է *ներկայացուցիչների կառավարութիւն*։ Այդ առաջ եկաւ այն պատճառով, որ պետութիւնը մեծանալով և ընդարձակուելով՝ տեղ և հնար չէր լինում միասին ժողովուելու։

Ներկայումս չկայ մի պետութիւն, որ կառավարուի բոլոր ազգաբնակութեան անմիջական մասնակցութիւնով, բացի Շվեյցարական 4 կանտոնից (նահանգ)։ Այդ կանտոններն էլ այն պատճառով են կարողանում այդ ձևով կառավարուել, որ շատ փոքր տարածութիւն են բռնում. մինչդեռ նոյն պետութեան միւս 18 կանտոնը կառավարւում են ժողովրդական ներկայացուցչութիւնով։

Ժողովրդական ներկայացուցչութիւնը սակայն առաջ եկաւ երկար տարիների կռիւներից յետոյ։ Ազգաբնակութիւնն ստիպուած է եղել կռիւ մղել և ոյժի զօրութեամբ միայն միահեծան թագաւորների իրաւունքները խլել, կրճատել, սահմանափակել։ Այդ պատճառով էլ կառավարութեան այդ ձևը կոչւում է «*սահմանադրական*»։

Ներկայացուցչական կառավարութեան ժամանակ իւրաքանչիւր քաղաքացի պիտի մասնակցութիւն ունենայ թէ պետական բոլոր խնդիրներում և թէ տեղական հասարակական գործերում։

Ներկայացուցչական կառավարութեան կերպերը ամեն տեղ նոյնը չեն։ Որտեղ ժողովուրդն աւելի ուժգին թափով է կռիւ մղել, այնտեղ նա աւելի ու աւելի մեծ իրաւունքներ է ձեռք բերել և՝ ընդհակառակը։

Պատմական պատահարների կամ ժողովրդի մէջ տիրող որոշ հայեցակէտի շնորհիւ առաջ են եկած զանազան սահմանափակումներ կամ կերպեր այդ ձևի կառավարութեան մէջ։

Կառավարութեան դեկը, այսինքն օրէնքների հրատարակելը և կառավարութեան վրայ հսկողութիւն—կօնտրոլ ունենալը պէտք է գտնուի ժողովրդից ընտրուած մարդկանց ձեռքում։ Այդ ընտրուածները կոչւում են

ժողովրդի ներկայացուցիչներ, կամ պատգամաւորներ։

Նայելով այն հանգամանքին, թէ որ չափով և որպիսի իրաւունքներով են մասնակցում պատգամաւորները օրէնսդրական բաժնում և բարձրագոյն կօնտրօլում, որոշւում է ժողովրդական կառավարութեան երկու ձև. առաջինը՝ սահմանադրական թագաւորութիւն, իսկ երկրորդը՝ ներկայացուցչական դեմօկրատիա։

Ժողովրդական ներկայացուցչական դեմօկրատիա կոչւած ձևի տակ պետութեան գլուխը, ինչ տիտղոս էլ որ ունենայ, ոչ այլ ինչ է, եթէ ոչ կատարող այն որոշած օրէնքները, որոնց մշակել է երկրի ժողովուրդը իր ներկայացուցիչների ձեռքով։ Պարզենք մեր խօսքը. ներկայացուցիչները ժողովւում են և սահմանում այս ինչ օրէնքը, երկրի պետը պէտք է չփոփոխէ այդ որոշումները, այլ միմիայն կատարէ նրանց։

Մինչդեռ սահմանադրական թագաւորութեան մէջ պետութեան գլուխն ունի նոյն իրաւունքը, ինչ որ ժողովրդի ներկայացուցիչները, իսկ մի քանի պետութիւններում երկրի իշխողին է պատկանում մինչև անգամ եթէ ոչ իրական, բայց գոնէ իրաւաբանական աւելի մեծ իրաւունքներ։

Այդ բացատրւում է նրանով, որ կռիւը այդպիսի երկրում աւելի թոյլ կերպով է արտայտւել, քան ժողովրդական դեմօկրատիա կոչւած պետութիւններում։ Սակայն թէ այս և թէ այն կառավարչական ձևերի մէջ գլխաւոր կէտը կազմում է այն, որ ժողովրդի ձեռքին է գտնւում պետական

բիւջէի քննութիւնը։ Ժողովուրդը, մերժելով կառավարութեան տալ նիւթական միջոցներ, դրանով կարողանում է ազատել իր գլուխը կառավարութեան այս կամ այն ոչ-ցանկալի առաջարկութիւններից։ Այդ հիմունքը կազմում է ներկայացուցչական կառավարութեան հոգին ու շունչը։ Առանց այդ իրաւունքի սահմանադրական կառավարութիւնը հաւասարւում է զեռօի։ Պարզենք օրինակով. պետութիւնն առաջարկում է ժողովրդի քննութեան իր կազմած բիւջէն, ելքի ու մուտքի պատկերը, որով՝ դիցուք, պահանջում է 20 միլիոն ռուբլի պատերազմական նպատակի համար։ Ներկայացուցիչները գտնում են, որ ներկայ ժամանակներում աւելի կարևոր է այդ գումարը յատկացնել ուսման գործին, իսկ պատերազմականի համար՝ ոչ մի կոպէկ, և այդ դրութիւնից դուրս գալու համար ժողովուրդը կարուկ միջոց ունի. չի հաստատում պետութեան պահանջածը և դրանով թողնում է անկատար իր համար ոչ-ցանկալի ծախսը։

Առհասարակ ժողովրդական ներկայացուցչութեան մէջ պէտք է լաւ որոշել, թէ որ չափով ներկայացուցիչներն ազատ են իրանց գործունէութեան մէջ։

Այդպիսով եթէ կառավարութեան գլուխ կանգնած է ժառանգական իրաւունքներով մի թագաւոր, բայց և այնպէս ժողովրդական ներկայայացուցիչների ձեռքումն են կառավարութեան բոլոր գործերը, այն ժամանակ էլ այդ երկիրը կարելի կը լինի համարել ներկայացուցչական կառավարութիւն. և ընդհակառակը՝ եթէ նոյնիսկ ունենայ նա-

խարար (պրեզիդենտ) ժողովրդից ընտրված, բայց այնպիսի իրաւունքով, որ ամեն րոպէ կարողանայ արձակել պալատը և հրաւիրել նորից իր սիրտն ուզած ժամանակ, այդպիսի հանրապետութիւնը էապէս կը լինի սահմանադրական թագաւորութիւն։

Այն ակտերը (վաւերացրած օրէնքները), որոնք պարզ ու որոշ կերպով ընդգծում են իշխողի իրաւունքները և ժողովրդական ներկայացուցիչների մասնակցութեան սահմանը —կոչւում են «սահմանադրութիւն» կամ եւրոպական բառով՝ Կոնստիտուցիա։

Եւրոպական մի քանի սահմանադրութիւնների զօրութեամբ ընտրելու իրաւունքից զրկւած են շատ շատերը (այսպէս կոչւած ակտիվ ընտրական իրաւունքից), իսկ աւելի քիչ քաղաքացիներ իրաւունք ունին պատգամաւոր ընտրելու (պասիվ ընտրական իրաւունք)։ Ընտրական իրաւունքից շատ անգամ աշխատում են զրկել այս կամ այն խաւերին։ Յայտնի է, որ մեր սոցիալական և տնտեսական պայմանները առաջ են բերել մարդկանց մէջ հողատէրեր, երկրագործներ, գործատէրեր և բանւորներ։ Սրանցից մի քանիսը հասկանալի է որ հարուստ են, իսկ աւելի ստւար մասը՝ չքաւոր։ Այդ սոցիալական տարբերութեան վրայ հիմնւում է ցէնզային կոչւած ներկայացուցչութիւնը։ Այստեղ թէ ընտրելու և թէ ընտրելու համար սահմանւում է այսպիսի ձև՝ ընտրութիւններին մասնակցելու իրաւունք է ստանում նա, ով տալիս է որոշ հարկ կամ յայտնի կալւածք ունի։ Սովորաբար այդ չափը—ցէնզը աշխատում են բարձր նշանակել, որպէսզի աղքատները, չքաւորները ձայնի իրաւունք չունենան։ Այդպիսի ընտրական սկզբունք է ընդունւած Անգլիայում, Բէլգիայում, Աւստրիայում, Վենգրիայում, Պրուսիայում և ուրիշ տեղերում։

Օրինակ՝ Անգլիայում ընտրական իրաւունք են ստանում այն քաղաքացիները, որոնք 10 ֆունտ ստերլինգ (մօտ100 ռ.) տարեկան բնակարանի վարձ են տալիս։ Կան պետութիւններ, որտեղ ցէնզային պայմաններն աւելի ծանր են։ Ռուսաստանում ևս զեմստվոյական, քաղաքային վարչութիւնների, նաև Պետական Դումայի ընտրական հիմունքները ցէնցային են։ Մի խօսքով ցէնզային սկզբունքը ներկայումս ամենատարածւած կերպն է։ Ինչ ասել կուզէ, որ այդ զօրեղ միջոցներից մէկն է, որ գործ է դրւում բանւորների, չքաւոր գիւղացիների և չունեւոր ինտելիգենցիայի դէմ, որպէսզի այդպիսի արհեստական արգելքներով դրանց հեռու պահեն օրէնսդրական խորհրդարաններից։ Սահմանափակումներ են մտցնում նաև տարիքի մէջ. մասնակցելու իրաւունք տրւում է ոչ թէ 20 տարեկանից, այլ 25-ից, իսկ ընտրելու՝ նոյնիսկ 30-ից։ Այդպիսով դուրս են մնում ընտրական ցուցակից մի քանի միլիոն հասուն ձայնաւորներ։ Մինչդեռ անպայման ցանկալի է, որ իրաւունք տրւի 20 տարեկանից բոլոր չափահասներին, առանց սեռի և դասակարգերի խտրութեան։ Այդպիսի ձայնատուութեան եղանակը կոչւում է *ընդհանուր*։

Երկրորդ տեսակի սահմանափակումն էլ կայանում է հետևեալում.

Ցայտնի օր հաւաքւում են ընտրական ձայնի իրաւունք ունեցողները և ընտրում են իրանց միջից ոչ թէ պատգամաւոր ուղղակի այն մարդուն, որ պիտի գնայ պարլամենտ, այլ ընտրում են դեռ լիազօրներ, այսինքն անհատներ, որոնք չունին իրաւունք գնալու պարլամենտ, այլ պիտի իրանց միջից ընտրեն մի քանիսին, և այդ վերջինները միայն գնան։

Այդպիսի ընտրական սկզբունքը համարւում է անուղղակի, կամ երկաստիճան։ Պատահում է որ երկաստիճանի տեղ լինում է եռաստիճան կամ նոյնիսկ քառաստիճան։ Մեր Պետական Դումայում քաղաքների վերաբերմամբ երկաստիճան, իսկ գիւղերի՝ եռաստիճան սիստեմ է սահմանած։ Այդ ձևը շատ անախորժութիւնների է տեղիք տալիս։ Անուղղակի ընտրութիւնների ժամանակ աւելի հեշտ է աջողեցնել ընտրութիւնը այնպիսի մարդկանց, որոնք թշնամի են ժողովրդի շահերին. մինչդեռ ուղղակի ընտրութեան ժամանակ թէ այդ և թէ դրա նըման խարդախութիւններ ու դէպքեր չեն կարող տեղի ունենալ։ Պէտք է հաւաքածները ուղղակի ընտրեն պատգամաւոր։ Այդ տեսակ ընտրութեան եղանակը կոչւում է *ուղղակի*։

Երկրորդ այն ձևն է, որ ընտրութիւնները անպայման պիտի լինեն գաղտնի։ Սակայն կան ասողներ, որ ընտրութիւնները կարելի է անել բացարձակ. պէտք է ունենալ քաղաքացիական քաջութիւն և չքաշուել ձայն տալուց բացարձակօրէն այս կամ այն անձնաւորութեան։ Սակայն կեանքի

փորձը այլ բան է ասում. հեշտ չէ մի քաղաքացու կառավարութեան դէմ կամ մի բանաւորի ու գործատարի համար իր տիրոջը սև քէֆ գցել. նա անպայման կը տուժի։ Ահա այդ անախորժութիւններին տեղիք չտալու համար ընտրութիւնները պիտի կատարւեն՝ գաղտնի։

Բացի դրանից, ամեն մի մարդ՝ ինչ դիրքի տէր էլ որ լինի, պիտի ունենայ ձայնի այնքան իրաւունք, որքան և միւսը՝ դիցուք չքաւորը։ Տարաբաղդաբար ամեն տեղ այդպէս չէ։ Օրինակ՝ Անգլիայում իւրաքանչիւր կալւածատէր ձայնի իրաւունք ունի, և եթէ այդ մարդը կալւածք կամ տուն ունի մի քանի տեղ, նա տալիս է մի քանի ձայն։ Մինչդեռ պէտք է այնպէս անել որ ամեն մի մարդ ունենայ մի ձայն։ Այդ չորրորդ ձևը կոչւում է *հաւասար* ընտրական սկզբունք։

Այդպիսով ուրեմն ժողովրդական շահերի համար անպայման պէտք է պահանջել *ընդհանուր, ուղղակի, գաղտնի* և *հաւասար* ձայնատուութեան եղանակ։ Միւս բոլոր եղանակները բաւարար պիտի չհամարւեն։ Այդ ձևն է, որ մի խօսքով շատ անգամ ասւում է՝ ընտրական իրաւունքի քառանդամ ֆորմուլա։

Ընդհանուր, ուղղակի, գաղտնի և հաւասար ձայնատուութեան իրաւունք ներկայումս գոյութիւն ունի շատ տեղ, օրինակ՝ Գերմանիայում, Ֆրանսիայում, Միացեալ-Նահանգներում, Բայլն։ Միայն այդ տեղերում կանայք չեն մասնակցում։ Կանայք ձայնի իրաւունք ունեն Հիւսիսային Ամերիկայի մի քանի նահանգներում, Նոր-Զելանդիայում և Աւստրալիայում։

Սակայն եթէ մենք ցանկանանք, որ ժո-

ղովրդի կամքն ու ցանկութիւնը աւելի ճշտօրէն արտայայտուեն, պէտք է ընդունենք նաև մի այլ սկզբունք, այն է՝ *պրոպորցիոնալ* ընտրական եղանակը։

Օրինակ՝

Երբ մի երկրում կան մի քանի մեծ կուսակցութիւններ, լաւ է ընդունել վերև յիշած եղանակը։ Ենթադրենք, թէ մի որևէ շրջանում կան մէկ միլիոն ընտրողներ. ասենք դրանցից վեց հարիւր հազարը պատկանում է մի կուսակցութեան, երեք հարիւր հազարը երկրորդ և հարիւր հազարը երրորդ։ Ընդունենք օրինակի համար՝ որ հարիւր հազար հոգին պիտի տայ մի ներկայացուցիչ. ուրեմն յիշեալ շրջանը պիտի ուղարկէ տասը պատգամաւոր։ Եթէ ընտրութիւնների արդիւնքն ընդունուի սովորական ձայների մեծամասնութեան սկզբունքով, հասկանալի է որ այդ շրջանի թեկնածուն կը լինի մի կուսակցութեան մարդ, որովհետև միլիոնից վեց հարիւր հազարը դրա կողմնակից է, մինչդեռ միւս կուսակցութիւնները բոլորովին կը զրկուեն իրանց ներկայացուցիչներից։

Իսկ այդ բաւական չէ որ անարդարացի է, այլև դեռ չի արտայայտում ճշտօրէն երկրի տրամադրութիւնը։ Սակայն կարելի էր ընտրութիւնները դասաւորել այնպէս, որ իւրաքանչիւր կուսակցութիւն ունենայ իր պատգամաւորը։ Եթէ հարիւր հազարը տալիս է մի ներկայացուցիչ, այն ժամանակ վերև յիշած վեց հարիւր հազար անդամ ունեցող կուսակցութիւնը պիտի տայ վեց պատգամաւոր, երեք հարիւր հազարը՝ երեք և հարիւր հազարը՝ մէկ։ Այդպէս դասաւորելով, նոյն շրջանը տալիս է դարձեալ նոյն տասը մարդը, սակայն այն առաւելութեամբ, որ ամեն մի կուսակցութիւն ունենում է իր թեկնածուն՝ համապատասխան ի հարկէ իր անդամների թուին։

Ընտրութիւնները միայն այդ եղանակով կատարելով կարող ենք երկրի ձայնը ճշտօրէն պարզել։ Մինչդեռ նախկին սովորական եղանակը (կամ *ինչպէս* ասում են *մաժորիտար* սկզբունքը) զուրկ է այդ առաւելութիւնից։

Պարզելով այդ ձևերը, պէտք է ասենք, որ կան նաև կառավարչական խառն ձևեր։ Դրա առանձնայատկութիւնը կայանում է նրանում, որ մի քանի պետութիւններում, բացի ժողովրդական խորհրդարաններից, կան նաև երկրորդ խորհրդարաններ։ Իւրաքանչիւր վճիռ կամ որոշումն օրէնքի ոյժ է ստանում այն ժամանակ, երբ երկու խորհրդարանումն էլ հաւանութիւն է գտնում։

Օրէնսդրական այդ ձևը կոչւում է *երկպալատեան* եղանակ։

Երկրորդ կամ վերին պալատը սահմանուած է նոյնպէս ժողովրդի իրաւունքները սահմանափակելու համար։

Երկպալատեան եղանակի մէջ պէտք է զանազանել երկու ձև. մէկը կենդրոնական, իսկ միւսը՝ ֆեդերատիվ։

Անգլիայում, օրինակ՝ վերին պալատը մի արիստոկրատական ներկայացուցչութիւն է։ Այստեղ մասնակցողները իրանց տեղերն ստանում են ժառանգաբար իրանց պապե-

րից։ Մասնակցում են լորդերը, թագաւորական տոհմին պատկանողները, յայտնի աղնւականները և եպիսկոպոսները։ Բոլոր լորդերը իրանց տեղերը ժառանգաբար տալիս են իրանց մեծ որդիներին։ Այդ խորհրդարանը նոյնիսկ անունով ուզում է զանազանուել հասարակ ժողովրդի խորհրդարանից—նա կոչւում է լորդերի պալատ։

Կան երկիրներ, որտեղ վերին պալատը ընտրական է, բայց չնայելով այդ առաւելութեան, այդ էլ ցանկալի չէ, որովհետև վերին պալատի նպատակն է սանձ դնել ժողովրդական պահանջներին։ Որտեղ էլ լինեն այդ երկրորդ խորհրդարանները՝ թէ ընտրական և թէ նշանակովի, իրանց ետև նրանք ունեն ծածուկ ցէնդ, որ երբէք ցանկալի չէ։ Այդպէս օրինակ՝ ֆրանսիական սենատը թէև ընտրական ձևով է, բայց և այնպիսի եղանակով, որ սենատ մտնում են հարուստները, բուրժուաները։

Բոլորովին ուրիշ սկզբունք ունի երկպալատեան եղանակը ֆեդերատիվ տէրութիւններում։ Բերենք մի օրինակ՝

Հիւսիսային Ամերիկայում օրէնսդիր հիմնարկութիւնը (կոնգրէս) կազմւած է պատգամաւորների պալատից և սենատից։ Թէ պատգամաւորները և թէ սենատի անդամներն ընտրւում են ընդհանուր ձայնտուութեամբ, բայց մի այնպիսի եղանակով, որ նոյնպէս գովելի չէ։ Օրինակ՝ իւրաքանչիւր նահանգ ուղարկում է պատգամաւորների պալատ ներկայացուցիչներ իր ազգաբնակութեան թւի համեմատ, մինչդեռ միևնոյն նահանգը սենատ է ուղարկում մի-

միայն երկու պատգամաւոր։ Այդպէս անում է այն մտքով, որ իբր թէ պետութեան մէջ իւրաքանչիւր նահանգ ունենայ հաւասար ձայն վերին պալատում։

Դուցէ կարելի լինէր հաշտուել այդ ձևի հետ, եթէ պետութեան առանձին մասերը տարբերուէին միմեանցից՝ թէ իրանց ծաւալով և թէ ազգաբնակութեան թւով։

Բայց քանի որ նահանգները՝ ինչ ասել կուզէ, ունեն ազգաբնակութեան տարբեր թիւ, այդ եղանակն էլ չի կարելի արդարացի համարել։

Մեր բիւրօկրատ կառավարութիւնն էլ ընդունում է երկրորդ պալատ։ Դա մեզանում կոչւում է Պետական Խորհուրդ. դրա անդամների թւի կէսը ընտրովի է. բայց ժողովրդի շահերով չհետաքրքրուող զեմստվոյական, քաղաքային և բօրսային կոմիտէների ներկայացուցիչներ։ Պետական Խորհրդի անդամների միւս կէսը նշանակովի է։

Ժողովրդական լայն շահերը պահանջում են, որ լինի մի պալատ։ Ներկայումս մի պալատեան եղանակ գոյութիւն ունի, օրինակ՝ Գերմանիայում։

Ուրեմն խսկական ժողովրդական ներկայացուցչութիւնը համարւում է այն ընտրական ձևը, որտեղ ընդունւած է ընդհանուր, ուղղակի, գաղտնի, հաւասար և պրոպորցիոնալ ձայնատուութեան եղանակ և որտեղ կայ մի պալատեան սիստեմ։

Բոլոր միւս ձևերը ուրեմն չեն համապատասխանում ժողովրդական լայն շա-

հերին։ Մեր Պետական Դումայի՝ ինչ ասել կուզէ, շատ հեռու է ժողովրդի շահերի ճիշտ թարգման հանդիսանալուց, մանաւանդ առաջիկայ երկրորդ Դումայի։ Բիւրօկրատ կառավարութիւնը՝ վախենալով ժողովրդի ընդդիմադրական տենչերից, ամեն կերպ աշխատում է կրճատել, խլել նոյնիսկ այն սահմանափակ իրաւունքները, որոնք տրուած էին առաջին Դումայի օրերով։

Ներկայումս խիստ սահմանափակուած են բանուորների, գիւղացիների իրաւունքները։ Սենատի բռնազբօսիկ բացատրութեան շնորհիւ այդ տարրը դրեթէ բոլորովին դուրս է մնում ընտրական ցուցակներից։ Բացի դրանից, կառավարութիւնը գործ է դնում ծայրայեղ խստութիւններ և այդ միջոցով աշխատում է Դուման լցնել իր ցանկացած պատգամաւորներով։

Ինչ ասել կուզէ, որ կառավարութիւնն այդպէս է վարում՝ աչքի առաջ ունենալով ժամանակակից տրամադրութիւնների առերևոյթ թուլանալը... Բայց այդ անմխիթար երևոյթների ետև լսւում է մի խրախուսական պահանջ... Դա պրոլետարի պահանջն է. նա չի թուլացել. նա գալիս է նոր թափով իր խախտած իրաւունքները պահանջելու համար. նա գալիս է ուժեղացնելու այն կռիւը, որ կողմնակից է ժողովրդական կատարեալ իրաւունքների. նա գալիս է պաշտպանելու ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԻ պահանջը։

ՀՀ Ազգային գրադարան
NL0189386

ԳՐԱԴԱՐԱՆ „ՊԱՅՔԱՐ"-Ի

ԼՈՒՍ ԵՆ ՏԵՍԵԼ.

№ 1. *ՈՐՆ Է ԻՍԿԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆԸ*

Կազմեց Ց. Ս. (*Սպառուած*)

Գինն է 2 կոպ.

№ 2. *ԸՆՏՐՈՒԹԵԱՆ ՕՐԸ ԳԵՐՄԱՆԻԱՅՈՒՄ*

ՏԱՏԵԱՆԱ ԲՕԳԴԱՆՈՎԻՉԻ

Թարգմ. Ա. Պայազատ

Գինն է 5 կոպ.

Մ. ՄԻՆԻՆ

№ 3. *ԻՆՉ ԵՆ ՍՈՎՈՐԵՑՆՈՒՄ ՍՕՑԻԱԼ-ԴԵՄՕԿՐԱՏՆԵՐԸ*

Թարգմ. Փ. Վ.

Գինն է 5 կոպ.

№ 4. *ՈՐՆ Է ԻՍԿԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹԻՒՆԸ*

Կազմեց Ց. Ս. (Բ. տպ).

Գինն է 2 կոպ.

ՇՈՒՏՈՎ ԼՈՒՍ ԿԸ ՏԵՍՆԵՆ.

Պ. ԼԱՖԱՐԳ

№ 5. *ԻՐԱՒՈՒՆՔ ՃՈՒԼԱՆԱԼՈՒ*

Ն. ԼԵՆԻՆ

№ 6. *ԳԻՒՂԻ ԿԱՐԻՔՆԵՐԸ*